

ՍՄԲԱՏ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Գեներալ Շանթի կյանքը մոտեցել էր այն սահմանագծին, երբ մարդն այլևս պատք է մեռնի, որպեսզի կանգնեցնեն նրա հուշարձանը: Անկեղծ ասած՝ Գեներալը չէր ուզում վախճանվել, բայց պետական որոշում էր ընդունված, քանդակագործները սկսել էին աշխատել, քաղաքապետարանը մեծ գումարներ էր հայթայթել, և պատվանդանի շինարարությունը սկսված էր:

Գեներալի առաջին նամակն ուղղված էր Պաշտպանության նախարարին.

– Աշխատեք ծանր վիրավորվել:

Բազմաթիվ անկեղծ և անքթիթ ջանքերից հետո՝ գեներալը դիմեց երկրի նախագահին.

– Հույս եմ հայտնում, թե կիրահրեք իմիջիայլոց մի պատերազմ, որտեղ կկարողանամ ծանր վիրավորվել և տունդարձի ճանապարհին արյունաքամ կլինեմ:

Նախագահի մամլո խոսնակն անձամբ բերեց պատասխան նամակը, որտեղ մասնավորապես ասված էր.

– Հարևան պետությունների հետ թշնամության պայմանագրերը նոր են կնքվել, բայց դեռ ուժի մեջ չեն: Եթե կամենաք՝ որևէ համեստ ավտոմոբիլ կսարքենք, բայց պարտավոր եք վճարել ջարդուփշուր մեքենաների համար՝ մինչ գոհվելը:

Սույն ընդունելի տարբերակը չէր կարող լինել, որովհետև հայրենասիրական պարտքի գործոնը տվյալ պարագայում կզրկվեր համապատասխան փայլից, ինչը խորագույնս կնսեմացներ Գեներալի ետմահու բնութագիրը: Երկար խորհրդածություններից հետո՝ Գեներալը հանդես եկավ բաց նամակով, որ տպագրվեց հանրապետության թերթերում: Նամակը հակիրճ և կոնկրետ էր.

– Սիրելի ազգ: Ելնելով այն փաստից, որ կառավարությունը նպաստավոր պայմաններ չի ստեղծում, որպեսզի գոհվեմ, և չեմ կարողանում գոհվել ինքնաբերաբար, խնդրում եմ ինձ ընդունել իբրև առաջիկա իմ արձանի

կենդանի օրինակ և հանդուրժել երկու տարբերակով իմ գոյությունը՝ իբրև բացառություն:

Լուծման անհրաժեշտությամբ տառապող նմանօրինակ հարցը հղի էր պետության հեղինակությունը որակազրկելու վտանգով: Շտապ որոշմամբ՝ գեներալ Շանթի բնակարանը տուն-թանգարանի կարգավիճակով հանձնվեց մատաղ սերնդի դաստիարակությանը:

– Երեխաներ, դուք շնչում եք մասունքացող առարկաների բույրն ու ականատեսն եք այն բանի, թե ապագա հերոսներն ինչպես են մեռնում՝ միաժամանակ անմահանալով:

Օրեր անց գեներալ Շանթի արձանն ի վերջո տեղադրեցին Հանրապետության հրապարակի երևելի մասում, և տուն-թանգարանի համար նախատեսված այլևայլ այցելությունները սառեցվեցին: Աննախադեպ թեթևության մեջ սավառնելով՝ գեներալ Շանթը խորը շունչ քաշեց՝ հանկարծ մտաբերելով, որ վաղուց արդեն ոչինչ չի կերել ու չի խմել: Անկողնուց բարձրանալու փորձ արեց, բայց կրծքավանդակի վերքը ցավում էր և արյունահոսում: Դուռը բացվեց, և քաղաքացիական հագուստով երկու քաղաքացի ներս խուժեցին:

– Շանթ գեներալն եք:

– Այո:

– Ձեզ հերոսի կոչում է շնոհվել. հետմահու: